Ականջ դիր երգիս

(Սիրուհուս կը սպասեմ)

Խօսք՝ Երժշտ.՝

1.- Արծաթ շողով, հարսի քողով
Ելաւ, լուսընկան
Ձեր տան կողքով, սրտի դողով
Կ'երթամ ու կու գամ:

Երգով սրտիդ դուռն եմ թակում
Կարօտ քո դէմքին,
Թէ չես գալու, գոնէ թաքուն
Ականջ դիր երգիս:

2.- Կ'անցնեն զոյգեր ուրախ դէմքով
Օրոր ու շորոր,
Ա՜խ ի՞նչ մեղք եմ, ես իմ տեսքով
Մենակ ու մոլոր:

Աստղերի մէջ լուսնի նման
Սիրուհուս կը սպասեմ,
Իմ արեւը դու ես միայն
Մի' թող ինձ անսէր:

Ջահել սիրտս խորովել է նազը իմ եարի,
Ափսոս հետս խռովել է, սիրտս կը մարի: (բան չկայ, կ'անցնի)
Աստղերի մէջ լուսնի նման
Սիրուհուս կը սպասեմ,
Իմ արեւը դու ես միայն
Մի' թող ինձ անսէր:
Երգով սրտիդ դուռն եմ թակում
Կարօտ քո դէմքին,
Թէ չես գալու, գոնէ թաքուն
Ականջ դիր երգիս:

Ականջ դիր երգիս:

Ամպել ա, ձիւն չի գայ

Խօսք եւ Երժշտ.՝ Ժողովրդական

1.- Նախշունն երազ՝ կարել ես,
Կոճակներդ՝ շարել ես
Ծամերուդ շաղ դրել ես,
Թուխ աղջիկ:
Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հաւասումը,
Հաւեսով անուշ աղջիկ,
Ջան աղջիկ:
Սիրուն աղջիկ քեզ գերի,
Քո կրակը ինձ էրի,
Սրտիս ջուր լից՝ հովանայ,
Ջան աղջիկ:
Կարմիր գինին թասումը,
Ես եմ քու հաւասումը,
Հարս եկար դու ալ քողով,
Ալ քողով:

Refrain 1: Ամպել ա, ձիւն չի գայ,
Մթնել ա, տուն չի գայ,
Դու օրորա', դու շորորա',
Քեզ սրտով սիրեցի,
Աչքերիս քուն չի գայ
Դու օրորա', դու շորորա':

Refr. 2: Լա, լա, լա, լա, լա
Լա, լա, լա, լա, լա
Դու օրորա', դու շորորա',
Լա, լա, լա, լա, լա
Լա, լա, լա, լա, լա
Դու օրորա', դու շորորա':

2.- Անուշ աղջիկ, թուխ աղջիկ,
Աստուած սիրես՝ թող գնա',
Մեր սէրը մարդ չիմանայ,
Չիմանայ:
Աշուղի պէս խաղ ասա,
Բլբուլի պէս տաղ ասա,
Հաւասով անուշ աղջիկ,
Ջան աղջիկ:
Մեր տուն, ձեր տուն իրար մօտիկ,
Կապել ես դու կարմիր գօտիկ,
Նման ես նռան հատիկ,
Ջան աղջիկ:
Լուսնեակը շող է գցել,
Երեսիդ քող է գցել,
Իմ սիրտը դող է գցել,
Քեզ մատաղ:

Այ Վարդ

Խօսք՝ Ա. Ծատուրեան Երժշտ.՝ Ալեքսանդր Սպենտարեան

1.- Ա՛յ վարդ, լսիր աղաչանքիս,
Թոյլ տուր թ’ից քեզ քաղեմ
Եւ քեզանով սիրած կոյսիս
Չքնաղ կուրծքը զարդարեմ:

Մի՛ վախենար, նրա կրծքին
Չես թառամի, քնքուշ վարդ,
Այնտեղ Մատաղ կրծքի տակին,
Կեանքի աղբիւր կայ առատ…

2.- Ա՛յ վարդ, պատմիր նրան յուշիկ
Իմ հուր տենչանքն ու յոյսեր,
Թող բուրմունքով քո անուշիկ
Նրա սրտում զարթնի սէր:

Այլ Աչեր Կան Իմ Սրտում

Խօսք՝ Երժշտ.՝

1.- Ինձ մի տանջիր հենց այդպէս,
Հայեացքով քո հմայիչ,
Խորութեամբ քո աչերին,
Ինձ մի տանջիր, մի գերիր:

Այլ աչեր կան իմ սրտում,
Գիշերների նման սեւ,
Գիշերների նման մութ,
Այլ աչեր կան իմ սրտում:

2.- Մի փորձիր քո հայեացքով,
Խորութեամբ քո աչերին,
Մի թռչիր քո թեւերով,
Ինձ կաշկանդել, ինձ գերել:

3.- Ջինջ լազուրում աչերիդ,
Մի տենչա, ինձ փայփայել,
Մի տենչա քո թեւերով,
Ինձ կաշկանդել ու պահել:

Ա՛խ արի՛, եար արի՛

Խօսք՝ Երժշտ.՝

1. Ախ սիրուն կարկաչում եմ
Կանչում եմ, շուտ արի,
Համբոյրներով քեզ եմ սպասում
Կանչում եմ, եար արի։

Ա՛խ արի, եար արի
Կանչում եմ շուտ արի,
Համբոյրներով քեզ եմ սպասում
Կանչում եմ, եար արի։

2.- Աղաչում եմ, կարօտել եմ
Թէ կարող ես շուտ արի,
Համբոյրներով քեզ եմ սպասում
Կանչում եմ, եար արի։

Ա՜յ սեւ աչերով աղջիկ

Խօսք՝ Լուդվիկ Դուրեան Երժշտ.՝ Խաչատուր Աւետիսեան

1.- Ա՜յ սեւ աչերով աղջիկ,
Լայ լալա, լայ լալա լալա, լալա լա։
Քաղցր պաչերով աղջիկ,
Լայ լալա, լայ լալա լա լա լա։

Ողջ աշխարհը ման եկայ,
Քեզ պէս աղջիկ չտեսայ,
Ես մինուճար մօր տղայ,
Իմ սրտի հետ մի՛ խաղա,
Արի բա՛ց ձեր տան դուռը,
Ասա՛, բարով ես եկել։

2.- Օրը կանաչ կարմիր է
Լայ լալա, լայ լալա լալա, լալա լա։
Բոյդ դալար բարդի է,
Լայ լալա, լայ լալա լա լա լա։

Ա՜խ ես քեզ ո՞նց չը սիրեմ,
Գարնան արեւ ես իմ եար,
Ես սիրահար պատանի,
Քեզ բերել եմ մատանի,
Արի բա՛ց ձեր տան դուռը,
Ասա՛, բարով ես եկել։

Թող աշխարհը իմանայ,
Քեզ տանելու եմ եկել։

Ախթամար

Խօսք՝ Երժշտ.՝

1.- Ծիծաղախինդ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առ ափնեայ
Ծովն էր մտնում գաղտագողի
Ամէն գիշեր մի տղայ։

2.- Ծփում էր ծովն ալեծածան
Ծփում էր սիրտը տղին
Գոռում է ծովն ալեծածան
Ու կռւում է կատաղի։

3.- Մոլորուեցաւ խաւար ծովում
Լուղորդ տղան սիրահար
Ու բերում է, հողմը բերում
Հառաչանքներ, ա՜խ Թամար։